ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 33-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետությանօրենքի 34-րդ,42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ.N 912-Ն որոշման 34-րդ,35-րդ կետերով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 11.02.2021թ <<Ինքնակամ կառույցը համայնքային սեփականություն ճանաչելու>> թիվ 9-Ա որոշումը, սեփականության իրավունքի N 15032021-06-0033 վկայականը և հաշվի առնելով,որ քաղաքացի Անահիտ Հովհաննեսի Ռամազաննն ընդունել է ավտոտնակը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու գնման նախապատվության գրավոր /մուտք՝ 29.03.2021թ. թիվ 83/ առաջարկությունը, վճարել է օրինականացման համար սահմանված վճարները՝

որոշում եմ

1.Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող Թումանյան քաղաք,2-րդ փողոց, թիվ 7/2 (վկայական՝ N 15032021-06-0033) հասցեում գտնվող 30,2քմ արտաքին մակերեսով ավտոտնակը /ներքին մակերեսը՝ 21.8քմ/ և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 0,00302 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած քաղաքացի Անահիտ Հովհաննեսի Ռամազանին /ծնված 25.03.1961թ./:

2.Ավտոտնակը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը,այն կառուցված չէ Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3.Նշված կառույցն իրականացրած անձը գնման նախապատվության առաջարկն ընունելուց հետո 30-օրյա ժամկետում պարտավորվում է Թումանյանի համայնքապետարանի բյուջե վճարել 13469,2 (տասներեք հազար չորս հարյուր վաթսունինը դրամ քսան լումա) ՀՀ դրամ, որից՝ համայնքապետարանի 900265123274 հաշվեհամարին՝ 2899,2 (երկու հազար ութ հարյուր իննսունինը դրամ քառասուն լումա) ՀՀ դրամը որպես հողամասի օտարման գին, իսկ 900265123407 հաշվեհամարին՝ 10570 (տաս հազար հինգ հարյուր յոթանասուն) ՀՀ դրամը՝ կառույցի օտարման գին /Տարածա գնահատման գոտիականության 16-րդ գոտի/:
Վերջիններիս մուծման անդորրագրերը սույն որոշման անբաժանելի մասն են:
4.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները՝ ընդհանուր 13469,2 (տասներեք հազար չորս հարյուր վաթսունինը դրամ քսան լումա)
ՀՀդրամ 30-օրյա ժամկետում չվճարման դեպքում 5աշխատանքային օրվա ընթացքում կրկին ներկայացնել գրավոր առաջարկություն անշարժ գույքը վարձակալելու վերաբերյալ: Վարձակալության իրավունքից ևս հրաժարվելու դեպքում այն տնօրինել 18.05.2006թ.թիվ 912-Նորոշման IV-րդ բաժնի 37-րդ կետով սահմանած կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՏԻԳՐԱՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 34-Ա

ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2019թ. դեկտեմբերի 06-ի <<ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքում 2020թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 49-Ն որոշումը և Թումանյան համայնքի ԱՁ -ների հայտերը՝

որոշում եմ

1.Թույլատրել Թումանյան համայնքի ներքոգրյալ ԱՁ-ներին իրականացնելու ոգելից և ալկոհոլային խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառք.

1/Հախվերդյան Հովակիմ-ք.Թումանյան 2021թ.ապրիլի 1-ից մինչև 2021թ. հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածի համար,

2/Գրիգորյան Սուսան -ք.Թումանյան 2021թ. ապրիլի 1-ից մինչև 2021թ. հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածի համար,

3/Սարգսյան Գայանե - ք.Թումանյան 2021թ. ապրիլի 1-ից մինչև 2021թ. հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածի համար,

4/Սարգսյան Հայկուշ - ք.Թումանյան 2021թ. ապրիլի 1-ից մինչև 2021թ. հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածի համար,

5/Չերչինյան Սեդրակ - ք.Թումանյան 2021թ. ապրիլի 1-ից մինչև 2021թ. հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածի համար,

6/Մաթևոսյան Սուսաննա-գ.Ահնիձոր 2021թ.ապրիլի 1-ից մինչև 2021թ. հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածի համար,

7/Սահակյան Անահիտ - գ.Լորուտ 2021թ. ապրիլի 1-ից մինչև 2021թ. հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածի համար,

8/Խառատյան Հասմիկ - գ.Լորուտ 2021թ. ապրիլի 1-ից մինչև 2021թ. հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածի համար,

9/Սարգսյան Մարինե - գ.Մարց 2021թ. ապրիլի 1-ից մինչև 2021թ. հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածի համար,

10/Սարգսյան Մանուշակ - գ.Մարց 2021թ. ապրիլի 1-ից մինչև 2021թ. հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածի համար,

11/Ղազարյան Հրանուշ -գ.Մարց 2021թ.ապրիլի 1-ից մինչև 2021թ. հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածի համար,

12/Թորոսյան Լադիկ - գ. Քարինջ 2021թ.ապրիլի 1-ից մինչև 2021թ. հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածի համար,

13/Քոչարյան Նաիրա - գ.Քարինջ 2021թ. ապրիլի 1-ից մինչև 2021թ. հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածի համար,

14/Վանյան Լաուրա - գ.Քարինջ 2021թ.ապրիլի 1-ից մինչև 2021թ. հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածի համար:

2.Հարկատուից գանձել համապատասխան տեղական տուրք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ժ/Պ ՏԻԳՐԱՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ